

ՀՐԱՏԱՐԱԿԻ 2

Հ. Ս. ՌԵՏՈՒՆԻ

ՆՈՐ ԴԱՐ

Rédaction „NOR TAR“:

Korona herceg utca 2

Parisi udvar, Budapest.

Որիան Պոստալեզիի «ՄԱՍԻՍ» ընկերության: Պայմանք. — Միայն առ այժմ՝ անիրաւոյն չի կրնա ընկ. գանձում:

ԱՄՍԱԵՐԹ

ԵՐԿՈՒ ԽՕՍԷ

Մեր յարգելի ընթերցողաց կանխաւ ներողամտութիւնը կը խնդրենք թերթիս ինչ ինչ պակասութիւնէն որովհետեւ գեռ իւր խանձարուրին մէջ է, իւր ածիլն ու բազմաւալը մեր մեծարգոյ ընթերցողաց քաջալերութենէն կախում ունի: Բաւ է որ վարձկան գրչի արտայայտութիւնը չէ որ կը նետենք հրապարակ այլ ափ մը օտարութեան մէջ դնուող, իրենց ազգային գոյութեան նախանձանդիւր հայութեան զգացումն է որ կուգայ իւր ձայնն ալ բարձրացնել թէ հոս ալ կան հայեր եւ ուխտած են հայ ապրիլ:

Երկրորդ նպատակն է հունգարահայոցը մէջ արթնցնել գոնէ հայ ազգային ոգին որու վերջին շառաւիղն է որ կ'ապրի ներկայիս մէջ, կոչ կ'ընեն մեր հայրենակիցներուն որ քաջալերելով զմեզ ի վիճակի կը լինինք հունգարիոյ մէջ ապրող մեր եղբայրները որ գրեթէ իրենց մայրենի լեզուն բոլորովին կորսնցուցած՝ բայց յառաջիկային կարողանանք գոնէ ազգային ոգին վառ պահել իրենց մէջ:

Որով եթէ պէտք եղած աշակցութիւնը գտնենք, այն ժամանակ ի վիճակի կը լինինք. հունգար լեզուով թերթ մ'ալ հրատարակել զուտ հայկական կեանքէ. որ հունգարահայն կարգադրվ իւր նախնեաց անցեալը ու ներկան թերեւս իւր մէջ մարտող վերջին կայծի նշոյլները որ մը բոցավառուին...:

Հ. Ս. ՌԵՏՈՒՆԻ:

ՏԻՇԵՏԱԿԵԼԻ ՕՐ ՄԸ

Պիտի բլայ գաղութիս հայութեան յունուար 19-ը. տեղւոյս յոյն առաջնորդը արխիմանտրիդ տեր Orphanides Anthimos Dr. յունաց եկեղեցւոյն մէջ քարոզ մը խօսեցաւ մասնաւոր հայոցս համար. որ ստորեւ կուտանք կարճ եւ ամփոփ տեղեկութիւնը: Վեր առնելով երկու քոյր ազգերու անցեալը եւ ներկայն. քրիստոնէութեան արեւելքի երկու ջահակիրները. որոնք դիմադրեցին անընկճելի կերպով տաճիկ բարբարոսութեան. եւ այսօր տապալելով հեթանոսութիւնը՝ արդարութեան լոյսն է որ ծագեցաւ փոքր Ասիոյ քրիստոնէայ ժողովուրդներուն վրայ:

Քարոյէն վերջ օրհնեց այն հայ մարտիրոս հերոսներուն յիշատակը որ սուր ի ձեռնին պատուով ինկան դաշտին վրայ անմահացնելով ներկայ ու ապագայ հայն ու հայաստանը:

Քարոյը որ մեծ ազդեցութիւն գործեց ներկաներու վրայ. հայ գաղութիս

կողմանէ պատուիրակութիւն մը ներկայանալով շնորհակալութիւն յայտնած է:

ՏԵՐՈՒՆԻ

Մասիս ընկերութեան անդամներէն Տիեար Միհրան Մարգարեան դժբաղդութիւնը ունեցաւ իւր երկու զաւակները կորսնցելու. հուարդ եւ Զաւէն որ փոխան ծաղկեպսակի բարեկամներէ նուիրուած է Մասիս ընկերութեան 150 դրոն (այս տխուր առթիւ մեր ցաւակցութիւնները խմբէ):

ՀԱՅ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻԸ

Որ կը տօնենք՝ պէտք չէ երբէք ուրախութեան աղբեցութեան տակ արբենալով ջուտուինք: Այլ այսօր է որ Հայութիւնը աւելի պէտք ունի քան երբէք հայ գեղջուկի բահին. հայ գրողի գրչին, հայ մտաւորականին: Եւ այլն եւ այլն: Որով կարողանանք ապագան ապահովել այն ազգին որ հինգ դարէ աւելի ուրիշի հաշւոյն կ'աշխատէր, օտարն է որ կ'օգտուէր իւր արդիւնաբերութենէն. բայց այսօր Հայաստանը հայոյն է. ինքն է իւր հայրենիքի տէրը. որով իրաւունքներ հայ որդի գիտնալով իւր պարտականութեան բաժինը պարտաւոր է միանալ իւր կարողութեան չափով ընդհանուր գործին: Աշխատինք հայեր որ կարողանանք հինգ ու կէս դար գերութեան պատճառաւ յետամնաց աշխատութիւնը յառաջացրնել. կարողանանք յաւերժացնել այն ազատութիւնը որ մեր արեան գնով ձեռք բերինք:

Հ. Ս. ՌԵՏՈՒՆԻ:

ԼՈՒՐԵՐ

Յունուար 25ին տեղի ունեցաւ ամուսնութիւնը Տիեար հուարդ Գեորգեանի ընդ Baronine Kozmitza Elza-ի հետ որ իրենց ամուսնութեան առթիւ նուիրեցին 500 դրոն Մասիս ընկերութեան:

Zürich-էն տիեար Գ. Գարակեօղեան յոյժ քաջալերական նամակ մը ուղղած է. որու մասին յարգելի պարոնին մեր խորհին շնորհակալութիւնները կը յայտնենք: Նամակին պարունակութիւնը ուշադրութեամբ կարդացինք. — պէտք է աշխատինք անդադար առանց. յուսահատութեան:

Համակին վերջին տողերը այնքան զգայուն գրուած են որ, ստիպուած ենք այդ տողերը բառ առ բառ գրել: Այն հայը՝ որ մեր նահատակներուն ձայնը — որ մէկ մի-

լիոնի կը հասնի — չի լսեր. անոնց անէծքը իւր վրան կ'առնէ. ինչքան ստորին բան է. երբ հայ մը իր նիւթական կամ բարդական օգնութիւնը չիտար անոնց համար, որոնք իրենց թանկագին արիւնը հոսեցուցին... Կեցցէ՛՛՛՛ ձեր ընկերութեան, Կեցցէ՛՛՛՛ հայաստան եւ կեցցէ՛՛՛՛ հայերը. կը փակեմ նամակս հայկական բարեւներով ամէն մեկ անգամներուն: Զերգ. Գ. Գարակեօղեան:

Վիեննայէ տիեար Գ. Ամադուսի. Մասիս ընկերութեան նուիրած է 100 դրոն. նաեւ Կ. Պօլսեցի Տոկթոր Այտնեան 10 դրոն: Ստոյգ աղբիւրէ կ'իմանանք. — Արարտեան անկախ հայկական հանրապետութիւնը պաշտօնապէս ճանչցուած է. ententeի կառավարութեանց կողմանէ:

Տեղական թերթեր կը գրեն թէ հայաստանի վարչական վերակազմութեան համար Խաչիոյ կառավարութեան դիմում եւ դած է...:

Հուրապէս թիւնք եւ թղթակցութիւն կը խնդրուի ուղղել. Rsduni H. Szerkisz, Korona herceg utca 2, Parisi udvar, Budapest.

Ներկայ թիւով սկսած ենք արդէն. Հունգարեանի մասը հրատարակել:

Շնորհակալութիւն կը յայտնենք ամէն անոնց որ թէ անձամբ թէ նամակաւ. «Նոր Դար» թերթը. եւ թէ Մասիս ընկերութիւնը շնորհաւորեցին:

Յարգելի տիկին մը բարեհաճած է մաս մը գոհարեղէններ նուիրել Մասիս ընկերութեան. որուն աճուրդի գրուելով ընկերութեան գանձուն կը յատկացուի դրամը, նաեւ տիեար. Մ. Մարգարեան զոյգ մը օղեր:

Վիեննայի Միքայէլեաններէն ստացուած է 50 դրոն. ընկերութեան գանձուն:

Վիեննա. — Տիկին Հովհաննէ Արարահան. մէկ տարու ան բաժանորդ գրուելով Նոր Դարի. նաեւ ընկերութեան անդամակցած է. նաեւ 50 դրոն նուիրած:

ՀՐԱՏԱՐԱԿԻ 2 ԵՒ ՎԱՐԻ 2 Հ. Ս. ՌԵՏՈՒՆԻ Rsduni H. Szerkisz, Korona herceg utca 2, Parisi udvar, Budapest.

ԽԵԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ՎԻԵՆՆԱ:

